community

The New Apostolic Church around the world

04/2018/AM

Շրջանային առաքյալ Մարկուս Ֆեիլբաումը անցնում է հանգստի

Խմբագրական՝
Բազմատեսակ շնորհներ

Ժամերգություն՝ Նրանց մեջ մեծագույնը սերն է

Եկեղեցական ուսմունք՝
Աղոթքն անժխտելի՝ կյանքի բոլոր իրավիճակներում

New Apostolic Church
International

Բազմատեսակ շնորհներ

Լուսանկար՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ եղբայրներ ու քույրեր,

այնքան ժամանակ, քանի դեռ մարդը հակված է իրեն ուրիշների հետ համեմատելու, նա միշտ տարբերություններ կտեսնի՝ մաշկի գույնի, սոցիալական վիճակի, ազգության, կարողությունների, ունակությունների: Եվ այդ համեմատության համար հաճախ սեփական դիրքորոշումս է ավելի մասշտաբային դառնում՝ այն, ինչ այլ է, ընդունվում է որպես տարբերություն, ընկալվում է կասկածելի, գնահատվում է և առանձնացվում, անգամ՝ դատապարտվում:

Աստված ինքը նման տարբերություններ չի անում: Նա սիրում է նրան, ով այնպիսին է, ինչպիսին՝ մենք: Նա սիրում է նաև նրան, ով ամբողջովին ուրիշ է: Մենք չպետք է այդ սիրո ճանապարհին կանգնենք: Բոլորն էլ պետք է Աստծո սերը նույն ձևով ճանաչեն:

Դրանից բացի, մենք պետք է միասին Աստծո համար և Աստծո հետ պայքարենք: Որպես Աստծո կողմից կանչվածներ, մենք պետք է նրան ծառայենք և Ավետարանն ուրախ տեղեկացնենք: Դրա համար մենք միմյանց կարիքն ունենք: Մենք կարիք ունենք մեր տարբերությունների: Մենք կարիքն ունենք մեր մերձավորի շնորհների, և նա կարիքն ունի մեր շնորհների:

Մենք ամրագրում ենք, որ տարբերությունները միշտ էլ նկատելի են լինելու: Բայց, մենք այդ բազմազանությունը չեն ընդունելու որպես խոչընդոտ, այն մեզ համար պատճառ չէ թերագնահատանքի կամ դատապարտության: Այն գիտակցությամբ, որ յուրաքանչյուրը իր տարբերվող շնորհները ներ է դնում, այդ տարբերությունները հավելյալ արժեքի շանս են դառնում բոլորի համար:

Որպես Քրիստոսի մարմնի անդամներ՝ մենք ծառայում ենք միմյանց: Քրիստոսի եկեղեցու ներսում մենք պետք է մեր շնորհները ներդնենք Հիսուսին ծառայելու մեջ: Այս առումով, մենք զգում ենք խորին շնորհակալություն անցյալի և ներկայի բոլոր քրիստոնյաների հանդեպ, ովքեր Աստծո կողմից ընդունած շնորհները ներ են դրել և այժմ էլ ներ են դնում Քրիստոսին և նրա եկեղեցուն ծառայելու մեջ:

Ընդունակությունները տարբեր են: Յուրաքանչյուրն իր նպաստն է բերում իր շնորհներով, իր ուժերով՝ առանց որևէ ակնկալիքի, Աստծո և մերձավորի հանդեպ սիրուց ելնելով:

Սրտանց ողջույններ՝

Ժան-Լյուք Շնայդեր

| Նրանց մեջ մեծագույնը սերն է



Բերն-Օսթեմունդիգեն եկեղեցուց ժամերգությունը հեռարձակվում էր շրջանային առաքյալի սպասավորության ներքո գտնվող համայնքներ

Լուսանկարը՝ Յոնաս Շպենգլերի և Մարկ Գենոուի

Կորնթացիներին Ա 13;13

,, Բայց արդ, մնում են հավատ, հույս, սեր, սրանք՝ երեքը, և սրանցից մեծագույնը սերն է,,:

Սրտանց բարի գալուստ այսօվա առանձնահատուկ ժամերգությանը: Սա նաև մի առանձնահատուկ օր է, որը մնալու է առաքյալների պատմության մեջ, քանի որ շրջանային առաքյալն անցնում է հանգստի: Իհարկե, այստեղ այժմ խոսքը չի գնում մարդուն պատվելու և փառաբանելու մասին: Մենք օգտագործում ենք առիթը սիրելի Աստծուն շնորհակալություն հայտնելու այն բանի համար, ինչը նա վերջին տասը տարում արել է մեզ համար և հանուն մեզ: Մենք շնորհակալություն ենք հայտնում սիրելի Աստծուն օրհնանքի համար, որը նա շրջանային առաքյալի գործունեության միջոցով մեզ է նվիրել, և որ սիրելի Աստված այս տասը տարիների ընթացքում, երբ նա ծառայել է որպես շրջանային առաքյալ, եղել է նրա հետ: Մենք գիտենք, որ հիմա դեպի երկնային հայրենիք

տանող մեր ճանապարհի նոր փուլի սկիզբն է, ինչպես երգիչներն ու երգչուհիները քիչ առաջ երգեցին: Ավտոմեքենայի պարագայում այնպես է, որ որոշ ժամանակ անց այն տարվում է տեսուչի մոտ, որպեսզի տեսնեն, թե արդյոք ամեն ինչ կարգին է և աքնվտանգության սարքավորումները ապահով են: Ավելի լավ է նախապես հոգ տանել: Հավանաբար մենք ունենք ևս հոգևոր տեսուչին դիմելու անհրաժեշտություն, որպեսզի տեսնենք, թե արդյոք մեր հոգիների անվտանգության վիճակը դեռ կարգին է: Եկեք հոգևոր ստուգման համար մեր սրտերն այսօր բացենք Սուրբ Հոգու ներգործության առաջ: Արդյո՞ք ամեն ինչ, ինչը մեր հոգևոր կյանքի ապահովագրությանն է ծառայում, կարգին է: Ի՞նչն է նպաստում ապահովագրությանը, եթե խոսքը գնում է մեր փրկության մասին: Հենց այն, ինչը Պողոս առաքյալը այստեղ ամենակարևոր կետն է համարում՝ խոսքը գնում է հավատի, հույսի, սիրո մասին: Ես հետևել եմ և տեսել, որ արդեն շատ երկար է անցել, ինչ գլխավոր առաքյալներից մեկը ծառայել է այս խոսքով: Իհարկե, մենք գիտենք, որ հավատը, հույսը և սերը կարևոր են: Սակայն, սիրելի քույր-եղբայրներ, այստեղ, իսկապես խոսքը գնում է մեր փրկության մասին: Փրկության համար վճռորոշ և կարևոր է, որ մեզ մոտ առկա լինեն հավատը, հույսը և սերը, ինչպես Տերն է այն ցանկանում:

Առաջին կետը, որը նշում է Պողոսը, հավատն է: Հավատն իսկապես չափազանց կարևոր է, քանի որ փրկությունը կախված է դրանից: Միայն հավատը կարող է մեզ փրկել: Միայն հավատը կարող է մեզ դեպի Աստված տանել: Խոսքը միայն հավատի մասին է: Մնացած ամեն ինչ երկրորդական է: Պողոսը գրել է, որ մենք գործում ենք հավատալով, ոչ թե՝ տեսնելով: Դա նշանակում է, որ քանի դեռ Տերը չի եկել, քանի դեռ փրկության պլանը լիովին չի կատարվել, մարդը պետք է հավատա: Նրա հարաբերությունը Աստծո հանդեպ հիմնվում է միայն հավատի վրա: Ի՞նչ է հավատը: Հավատն այն գիտակցությունն է, որ ինչ որ բան կա, որը չենք կարող տեսնել, որը չենք կարող հասկանալ, որը չենք կարող պատկերացնել: Դա հավատն է: Կարևոր է, որ մենք միշտ գիտակցենք, որ դրա կարիքն ունենք մինչև վերջ: Ինչի՞ն ենք հավատում մենք: Մենք հավատում ենք, որ Աստված սեր է: Դա քրիստոնեական հավատի հիմքն է՝ Աստված սեր է: Մենք հավատում ենք Սուրբ Երրորդություն Աստծուն՝ Հայր Աստծուն, Որդի Աստծուն և Սուրբ Հոգի Աստծուն: Այս երեքը լիովին մեկ են և սերտ կապված են միմյանց հետ: Սա է սիրո սահմանումը: Սերը հիմնականում այն հարաբերությունն է, որն առկա է այդ Երրորդությունում՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու միջև: Երեք բոլորովին տարբեր անձեր մեկ են, չեն կարող նրանց բաժանել, նրանք սերտորեն կապված են միմյանց: Սա է սիրո բնորոշումը: Չեն կարող այն բաժանել: Աստված սեր է: Մենք հավատում ենք, որ Աստված սեր է: Աստված՝ Երրորդություն Աստվածն է մարդուն արարել՝ եկեք մարդ ստեղծենք մեր պատկերով: Նա ուզում է մարդուն տանել դեպի իր հետ հարաբերության, միասնության: Նրանք պետք է մաս ունենան այս սիրուց: Սակայն, մարդն անհնազանդ էր, հեռացավ Աստծուց: Սակայն, Աստված սեր է, նրա ողջ գործունեությունը ի սկզբանե նպատակաուղղված է մարդուն նորից դեպի այդ միասնություն բերելուն, Աստծո և մարդու

Մենք սպասում ենք հավիտենական արքայությանը, երբ մեր բոլոր տառապանքները, և վիատությունները կմոռացվեն:

միջև հարաբերությունը վերականգնելուն, որպեսզի մարդը կարողանա նորից Երրորդություն Աստծո հետ կատարյալ միասնության մեջ ապրել:

Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին: Իր սիրուց ելնելով՝ նա Տեր Հիսուսին՝ իր Որդուն, ուղարկեց երկիր, նա մարդացավ: Հիսուս Քրիստոսը մեզ համար բացահայտեց Աստծո կամքը, մտքերը և էությունը: Դրան մենք հավատում ենք: Մենք տեսնում ենք Աստծուն, քանի որ տեսնում ենք Հիսուս Քրիստոսին, և եթե մենք լսում ենք Հիսուս Քրիստոսին, կարդում ենք նրա խոսքերը, ապա դա Աստծո խոսքն է և նրա կամքը: Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին, ում, Աստված իր սիրուց ելնելով՝ երկիր ուղարկեց, ով իրեն զոհաբերեց: Դա այն ճանապարհն է, որ Աստված սիրով մեզ տվեց, որպեսզի իր մոտ գնանք:

Մենք հավատում ենք Սուրբ Հոգի Աստծուն՝ նոր Արարչին: Իր սիրով Աստված ուղարկեց Սուրբ Հոգուն: Այդ Սուրբ Հոգին Աստոծ սերը փոխանցելու և նոր արարչագործության համար է գործում: Նա նախ արարում է նոր մարդուն, նա արարում է փրկություն, նա գործում է և ավարտում Աստծո փրկության պլանը: Այսօր Աստված երկրի վրա ներկա է Սուրբ Հոգու միջոցով, որտեղ գործում է Աստծո սերը: Հոգու միջոցով նա շարունակում է փրկության պլանն իր վերջնական նպատակով, այն է՝ բոլոր մարդկանց Աստծո հետ միասության տանել:

Ուրեմն, մենք հավատում ենք Աստծուն, ով սեր է: Սերը սահմանում է, ներերրորդության հարաբերություն, Աստված ուզում է մարդուն դեպի այդ հարաբերությունը տանել, դրա համար նա իր սիրուց ելենելով՝ Հիսուս Քրիստոսին՝ իր Որդուն, երկիր ուղարկեց, ով զոհաբերվեց: Մենք հավատում ենք, որ այսօր էլ Աստված իր սիրուց ելնելով՝ շարունակում է գործել Սուրբ Հոգու միջոցով, որին մենք չենք կարող տեսնել, սակայն, դա Աստծո գործունեությունն է, Աստծո սերը: Դրան մենք հավատում ենք: Ապա, մենք հավատում ենք, որ Աստված մեզ սիրելով՝ մեզ տվել է եկեղեցին, հոգևոր պաշտոնը և խորհուրդները, և մենք հավատում ենք այն խոստմանը, ինչը Հիսուսը մեզ է տվել և որը Սուրբ Հոգին միշտ կենդանի է պահում՝ Տերը նորից է գալու, նա ուզում է իր թագավորությունը կառուցել և նոր արարչագործություն անել բոլոր մարդկանց համար, ովքեր հետևում են Հիսուսին: Դրան մենք հավատում ենք: Կարևոր է, որ դա մենք միշտ գիտակցենք: Հավատն արտահայտվում է վստահությամբ: Մենք հավատում ենք, որ Աստված սեր է, մենք հավատում ենք, որ Աստծո սերը շարունակում է արարել և ուզում է մարդուն փրություն նվիրել: .

Այսօր մենք չենք կարողանում դա միշտ տեսնել: Անգամ, եթե մենք դա չենք տեսնում, հավատում ենք՝ Աստված ինձ սիրում է: Անգամ, եթե մենք չենք հասկանում այն, ինչ Աստված անում է, մենք վստահում ենք նրան, քանի որ մենք հավատում ենք՝ իմ Աստվածը սեր է, նա գործում է: Անգամ, եթե երբեմն ամեն ինչ ձախողվում է, մենք հավատում ենք ու վստահում՝ իմ Աստված այնպիսին է, ինչպիսին մենք ենք կարծում : Նա փրկություն է ստեղծում, նա գործում է բոլոր մարդկանց փրկության համար: Դա ապագան է: Մենք վստահում ենք Աստծո ամենազորությանը, Աստված այնպիսին

Մենք չենք թողել մեզ վիատվել մեր կամ ուրիշների սխալների, ոչ կատարյալ լինելու պատճառով:

է, ինչպիսին մենք ենք կարծում: Հավատում ենք Երրորդություն Աստծուն, Հիսուս Քրիստոսին, Սուրբ Հոգուն, եկեղեցուն, հոգևոր պաշտոնին, խորհուրդներին, ապագային: Դրանից է գալիս վստահությունը: Դա առաջին կարևոր կետն է, ողջ փրկությունը կախված է դրանից:

Որպես երկրորդ կետ Պողոսը նշում է հույսը: Հավատից ծնվում է հույսը: Մենք հավատում ենք Աստծո մտադրությանը: Մենք ձգտում ենք, մենք համբերությամբ սպասում և նախապատրաստվում ենք: Դա հույսի սահմանումն է: Քրիստոնեական հավատը հիմնականում կողմնորոշվում է ապագայով: Ես դեռ երկու շաբաթ առաջ Վաշինգտոնում ասացի, քանի որ ինձ համար մտահոգություն է, երբ ես նայում եմ քրիստոնեական աշխարհին: Նկատելի է, որ հավատը երբեմն առկա է, բայց հույսը, ապագան, հավիտենական կյանքը, մեզ համար առաջին հարությունը, հետո նոր արարչագործությունում բոլորի փրկությունը, ովքեր Քրիստոսին իրենց Տերն են համարում, նվազել է: Քրիստոնյաների համար մեծ վտանգ է, որ քրիստոնեական հավատը միայն դեռ էթիկա է, մի ուսմունք, որը տեղեկացնում է էթիկական արժեքներ, որպեսզի մարդկանց միասնական կյանքը, միասնությունը մի քիչ ավելի լավացվի: Դրանք էթիկական արժեքներ են, որոնք շատ լավն են, բայց դրանք կարելի է այլ բաներով փոխարինել: Որտեղ հավատը ապագայի հետ կապված չէ, այն դառնում է ավանդույթ կամ բարոյականություն, բայց այն փրկություն չի բերում; Դա իսկապես իմ մտահոգությունն է, եկեք ամրանանք նաև հույով:

Մեր հավատը կողմնորոշվում է ապագայով: Մենք սպասում ենք այն բանին, որ Աստված իր խոստումն իրականացնի: Մենք սպասում ենք փրկությանը, որ նա է մեզ նվիրում; Վերջապես, մենք սպասում ենք նոր արարչագործությանը:, Նրանք, ովքեր Քրիստոսին որպես Տեր են ընդունում, արժանանալու են փրկության: Հույսը կայանում է նրանում, որ մենք գիտենք, որ նա գալու է: Տեր Հիսուսն ասել է, որ Աստծո թագավորությունն արդեն ձեր մեջ է, ձեր՝ շուրջը: Արդեն դրա ստվերն առկա է: Այստեղ Պողոսն ասում է, մենք հիմա հայելիով տեսնում ենք մի մութ պատկեր: Մենք արդեն տեղեկություն ունենք փառահեղության, կատարելության մասին: Սակայն, ամեն ինչ դեռ հստակ չէ: Բայց մենք գիտենք, լինելու է, ամեն ինչ դեռ ստեղծման ընթացքում է: Նոր արարածը, որն Աստված մեզ է տվել, արդեն առկա է, սակայն, այն դեռ ընթացքի մեջ է: Փրկությունը, որը նա ուզում է բոլոր մարդկանց նվիրել, արդեն առկա է, սակայն այն դեռ ընթացքի մեջ է, դեռ ոչ կատարյալ է: Եկեղեցին կատարյալ չէ, եղբայրները, հոգևոր պաշտոնները կատարյալ չեն, հավատացյալները կատարյալ չեն, փրկությունը կատարյալ չէ, խաղաղությունը կատարյալ չէ և այլն: Ամեն ինչ դեռ ընթացքի մեջ է: Մենք գիտենք, որ դա լինելու է և նախապատրաստվում ենք դրան: Այդ հույսն օգնում է մեզ հաստատուն մնալու, անգամ, եթե փորձությունների ենք ենթարկվում, անգամ, եթե ստիպված ենք քննություններ հանձնել: Մենք պետք է ամուր մնանք հույսի մեջ, արժե հավատարիմ մնալը, Աստծո թագավորությունը գալու է, մենք մուտք ենք գործելու այնտեղ, մենք հավերժ երանելի և երջանիկ ենք լինելու: Սպասիր միայն, հավատարիմ մնալը կարժևորվի:

Այս ու այնտեղ մահը վրա է հասնում և ասում են, նա մահացավ, ի՞նչ ստացավ նա: Ոչ, հույսը մահից էլ վեր է, այն ավելի հեռուն է գնում; Մահը խոչընդոտ չէ: Եթե մշտապես փորձությունների մեջ են, անգամ

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հրաժեշտ է տալիս շրջանային առաքյալ Մարկուս Ֆեհլբաումին/ նկար՝ ձախ/
վաստակած հանգստի անցնելու առիթով և նոր շրջանային առաքյալ է կարգում Յուրգ Զբինդենին / նկար՝ աջ/

մահը պետք է մոտենա, դա մեր հույսի մեջ ոչինչ չի փոխում, ամեն ինչ ընթացքի մեջ է, դա լինելու է: Աստված մեզ խոստացել է՝ ինչ ես սկսել եմ, այն ավարտելու եմ, ինչքանով որ դու ինձ հետ համաձայն կլինես, ես քեզ իմ արքայությունը կտանեմ; Այդ հույսն ապրում է մեր մեջ: Դրա համար էլ մենք չենք դադարում հուսալ: Եթե մենք հարյուր հիսուն անգամ ընկնում ենք, հարյուր հիսունմեկ անգամ վեր ենք բարձրանում: Մենք շարունակում ենք: Քանի որ մենք հույս ունենք, մաքրվում ենք, պայքարում ենք մեղքի դեմ, ջանք ենք թափում հաղթահարելու, նոր կյանքով զարգանալու: Մենք չենք դադարում հուսալ: Դա լինելու է, մենք նախապատրաստվում ենք դրան: Մենք նայում ենք աշխարհին և տեսնում ենք կարիքներ, անարդարություն, շատ մարդկանց սարսափելի ճակատագրեր: Մենք տեսնում ենք նաև մարդկանց, ովքեր Աստծուց շատ հեռու են, նման դեպքում կարելի է արիությունը կորցնել, կարելի է հարցնել՝ ի՞նչ է անում ձեր Աստվածը:

Մեր Աստվածը աշխատում է Սուրբ Հոգու միջոցով, նա աշխատում է բոլոր մարդկանց փրկության պլանի վրա: Դա Աստծո գործունեությունն է, նա գործում է Սուրբ Հոգու միջոցով: Նա շարունակելու է գործել մինչև վերջ: Արժե Աստծուն ծառայելը շարունակել և նվիրաբերվել նրա գործին, համագործակցել, քանի որ պլանը շարունակվում է կատարվել, ոչ ոք այն չի կարող կանգնեցնել: Դա հույսն է: Մենք գիտենք, որ դա լինելու է, մենք սպասում ենք դրան: Մենք ձգտում ենք դրան և նախապատրաստվում: Մենք սպասում ենք համբերությամբ և պայքարում ենք մեղքի դեմ: Արժե Տիրոջը ծառայել և զոհաբերել: Արժե նրա գործին համագործակցելը, քանի որ մենք պատմության վերջը գիտենք: Եվս մի վերջին կետ՝ դա մի փոքր տարօրինակ է: Պողոսը սկզբից նշում է հավատը, հետո՝ հույսը, և նոր միայն՝ սերը: Պողոսն ասում է, հավատը գործում է սիրո մեջ: Ինչպես հավատն առանց հույսի արժեք չունի, այնպես էլ հավատն առանց սիրո մեռած հավատ է; Սերն այն չափն է, որով չափվում է հավատը: Խոսքը հավատի մասին է, բայց, որպեսզի այդ հավատը գնահատվի, Աստված նայում է սիրուն: Որտեղ ճշմարիտ հավատ կա, այնտեղ առկա է սերը, սերը Աստծո հանդեպ: Ինչպե՞ս է արտահայտվում այդ սերը: Տեր Հիսուսն ինքն է ասել՝ ով ինձ սիրում է, նա պահում է պատվիրանները: Ով ինձ սիրում է, նա հնազանդ է: Շատ մարդիկ, անգամ շատ քրիստոնյաներ, սիրո այլ պատկերացումներ ունեն: Ոչինչ չենք կարող փոխել, դա Հիսուս Քրիստոսի խոսքն է, Հիսուսն է դա սահմանել: Հավատը չափվում է սիրով: Ով ինձ սիրում է, նա հետևում է իմ պատվիրաններին: Մի՞շտ ենք ունենում այդ ներքին ցանկությունը Աստծո պատվիրաններով ապրելու, ներքին ցանկությունը՝ Աստծո օրենքով գործելու և մեր կյանքը դրա համաձայն ձևավորելու: Ով ինձ սիրում է, նա պահում է իմ պատվիրանները:

Եթե գիտեն, որ ամեն ինչ հավատի վրա է հիմնվում և Աստված հավատը չափում է սիրով և սերը բնորոշում է հավատի հնազանդությամբ, ապա սերն այնքան էլ հարմարավետ չէ: Մյուս պատվիրանը, որ նա տվել է, դա մերձավորին սիրելու պատվիրանն է, եթե մենք ունենում ենք այդ հույսը, Աստված խոստացել է իր հետ միասնությունը՝ մենք ձգտում ենք դրան, մենք նախապատրաստվում ենք: Ի՞նչ է նշանակում նախապատրաստվել: Մենք նախապատրաստվում ենք Աստծո հետ միասնության և պատկերացնում ենք, որ արդեն այսօր մենք միասին ենք Աստծո հետ

այնպես, որ նրա մտքերը, նրա մտածողությունը մեր մտածողությունն ու մտքերն են դառնում: Ի՞նչպես է մտածում Հիսուսը: Նա սիրում է իմ մերձավորին, ինչպես ինձ է սիրում: Քանի որ մենք այդ հույսը ունենք, այդ ձգտումը ապագայի հանդեպ, այդ ձգտումը Աստծո հետ միասնության, արդեն այսօր մենք դա պատկերացնում ենք: Մենք փորձում և միշտ ջանք ենք թափում աճել Հիսուս Քրիստոսի մտայնությամբ: Հիսուս Քրիստոսն Աստված է, Աստված սեր է, նա սիրում է իմ մերձավորին, այդ ամենը կապված է միմյանց հետ: Ես աճում եմ սիրո մեջ, քանի որ ես այդ հույսն ունեմ, ես սպասում եմ միասնությանը, ես նախապատրաստվում եմ Աստծո հետ միասնությանը,Աստված սեր է, ես էլ պետք է սեր լինեմ: Դրա համար էլ սերն անսահման կարևոր է: Ուրեմն՝ հավատը վճռորոշ է փրկության համար, գալիս է հույսից և չափվում է սիրով: Ես ավարտում եմ խոսքս՝ Պողոսն ասում է՝ մնում են հավատը, հույսը, սերը: Սրանք հիմնական սկզբունքներն են, սակայն նրանց մեջ սերը մեծագույնն է: Պողոսը չի ասում՝ սերն ամենակարևորն է, այլ ասում է՝ մեծագույնը: Եվ նա ինքը բացատրում է, քանի որ հավատը ինչ որ ժամանակ դադարում է: Երբ հավատի ժամանակն անցնում է, ապա մենք տեսնում ենք, դիտարկում ենք այն, ինչին հավատացել ենք: Հետո հավատը դադարում է: Արդեն այսօր մենք կարող ենք հավատն ապրել: Այդ ապրումները ուժեղացնում են մեր հավատը: Երբ մենք նրա մոտ ենք, կարրիք չկա հավատի, ամեն ինչ նրա ձեռքերում է, ամեն ինչ պարզ է: Այն հույսի, որ մենք ինչ որ բանի ենք սպասում, նաև մի փոքր նախաճաշակումն ունենք Սուրբ Հաղորդության ժամանակ, միասնության մեջ:

Գեղեցիկ է, երբ կարողանում են ապրել այն, ինչը կարող է Աստծո հետ միասնության տանել, բայց դա միայն նախաճաշակումն է: Բայց, ինչ որ ժամանակ Աստված իրականացնելու է իր խոստումը, այդ դեպքում այլևս կարիք չի լինի հույսի: Դա կապրենք արդեն իրականության մեջ: Արդեն այսօր էլ մենք կարող ենք տարբեր ձևերով սերն ապրել, բայց այն երբեք չի դադարելու: Իսկ ինչու՞: Ես վերադառնում եմ սկզբին: Մենք ընդունում ենք Աստծո հետ հարաբերությունը, դրանում մենք կարող ենք ապրել, այդ հարաբերությունը սեր է: Երբ մենք հասնում ենք դրան, եթե մենք նպատակին մոտ ենք, ապա մենք ապրում ենք Աստծո սիրո մեջ, ունենում ենք Աստծո հետ ներքին միասնությունը, նրա հետ լիովին մեկ ենք լինում, նրան շատ մոտ ենք լինում, և ոչ ոք չի կարող այլևս նրանից մեզ բաժանել, ապա դա սերն է: Այսինքն՝ սերը չի դադարում, այն կատարյալ է դառնում, եթե մենք Աստծո հետ միասնության մեջ ենք ապրում: Ինչպե՞ս է մերձավորին սիրելու պարագայում: Այն ևս չի դադարում, այն ևս կատարյալ է դառնում, քանի որ մենք գտնվում ենք հարսանիքի սրահում և ավելի ուշ՝ նոր արարչագործությունում: Մարդիկ ապրում են նոր հարաբերություններում, նրանք լցված են Աստծո սիրով: Աստծո հետ այդ ներքին կապի մեջ մարդկաց հետ հարաբերությունները ևս բոլորովին այլ ձևով են կազմավորվում: Ամեն մեղսավորը հեռանում է, ամեն մարդաբանականը հեռանում է, ամեն ինչ կողմնորոշվում է Աստծով, Աստված ամեն ինչ է ամեն ինչում: Հարաբերությունները մարդկանց միջև ևս աստվածային հարաբերություններ են, որոնք հենվում են Աստծո վրա, լցված են Աստծո սիրով: Ամբողջ եղելության նպատակը հավիտենական կյանքն է, որ մենք հավերժ Աստծո հետ միասնության մեջ ապրենք, և որ մարդկանց միջև Երրորդություն Աստծո հարաբերություններ լինեն: Բոլոր մարդկանց հարաբերությունները հիմնվում են սիրո վրա: Դա է մեր ապագան:

Սրանք մի քանի մտքեր էին այս երեք գլխավոր հասկացությունների վերաբերյալ՝ հավատ, հույս, սեր: Մենք լավ կանենք, որ մի քիչ զբաղվենք սրանցով: Ինչի՞ն եմ ընդհանրապես հավատում ես: Ու՞մ եմ հավատում: Ժամանակի հետ այդքան շատ փոշի է պատել սրան և երբեմն էլ հավատը փոխել են ուրիշ այլ բաների հետ, ավանդույթի հետ, ինչպես միշտ: Եկեք գնանք դեպի ակունքները: Ինչի՞ն ենք հավատում, ու՞մ ենք հավատում ընդհանրապես: Դրանից է աճում հույսը և սերը: Առանց հույսի մեր հավատը մեռած է, հավատը չափվում է սիրով: Նպատակն է՝ հավերժ ընդունված լինել Աստծո սիրո մեջ, մենք և մեր շրջապատի մարդիկ: Դա մեր ցանկությունն է, դա մեր ապագան է: Ամեն:

Հիմնական մտքեր

Հավատը, հույսը և սերն անբաժան են և միաժամանակ անժխտելի են փրկության համար:Մենք հավատում ենք, որ Աստված սեր է և վստահում ենք նրան: Այդ հավատը վկայում է հույս և սեր: Մենք համբերությամբ սպասում ենք փրկությանը և եռանդուն նախապատրաստվում ենք դրան: Մենք պատասխանում ենք Աստծո սիրուն նրանով, որ լսում ենք նրա պատվիրանները և սիրում ենք Հիսուսի օրհանկի համաձայն:

Շրջանային առաքյալ Ռայներ Շթորքը Հայաստանում էր

Լուսանկարը՝ Հայաստանի ՆՄԵ

Նոր սարկավագի ձեռնադրում

Վերջապես եկավ 2018-ի սեպտեմբերի 1-ը և Հայաստանի նորառաքելական եկեղեցու քույր-եղբայրները վայելեցին տոնական ժամերգությունը շրջանային առաքյալ Ռայներ Շթորքի հետ: Շրջանային առաքյալին ուղեկցում էին առաքյալներ Վիլհելմ Հոյերը, Պավել Գամովը, Յենս Լինդեմանը: Հավատացյալ եղբայրներն ու քույրերը երկար են սպասել ու նախապատրաստվել այս ժամերգությանը, քանի որ նրանք համոզված էին, որ շրջանային առաքյալի ծառայությունը օրհնանք է բերելու: Հայաստանի համայնքների բոլոր քույր-եղբայրները հավաքվել էին Վանաձորում, մշակույթի տան տոնականորեն զարդարված սրահներից մեկում: Ոչ մի ազատ տեղ չկար: Առաջին շարքերում սպիտակ վերնաշապիկներով նստած էին Գյումրիի համայնքի նոր կազմավորված մանկական երգչախմբի տասնհինգ երեխաները : Երևանի համայնքի աղջիկների երգչախմբի կողքին, նրանք էլ իրենց երգերով էին ժամերգությունը դարձնում տոնական: Ժամերգության ավարտին նրանք մի քանի երգ կատարեցին, որոնք դուր եկան բոլոր ներկաներին: Ժամերգության ժամանակ կատարվեց նաև մի հաճելի արարողություն՝ շրջանային առաքյալը սարկավագ ձեռնադրեց Ալավերդու համայնքի համար: Շրջանային առաքյալը ներկայացրեց նոր առաքյալ Յենս Լինդեմանին, ով հաջորդ տարի փոխարինելու է առաքյալ Վիլհելմ Հոյերին, քանի որ առաքյալ Հոյերը անցնելու է հանգստի: Առաքյալ Լինդեմանը, ով առաջին անգամ էր Հայաստանում, արտահայտեց իր մեծ տպավորությունը և վստահեցրեց, որ տարբեր երկրների բազմաթիվ համայնքների կողքին / նա հոգևոր խնամք է տանում Հունաստանում, Աֆրիկայում, Իրանում և այլ երկրներում/ հաճույքով կծառայի նաև Հայաստանի համայնքներին:

Եղբայրական սենյակ, տոնական ժամերգություն 01.09.2018. Առաքյալ Գամով, Առաքյալ Լինդեման, Շրջանային առաքյալ Շտորք, թարգմանչուհի Սիլվա, Առաքյալ Հոյեր,

Մանկական երգչախումբ Գյումրիից

- Արթուն լինել մեր մտքերում
  Երբեմն լինում են մտքեր, որոնք բարի չեն, ուստի պետք է արթուն լինել դրանց հանդեպ: Մենք պետք է արթուն լինենք մեզ տրված առաջադրանքում:
- Արթուն լինել խոսքերում
  Մեկ բառը կարող է ամեն ինչ ոչնչացնել: Ավելի լավ է լռել, քանի որ մեկ սխալ բառով կարող են շատ բան փչացնել:
- Արթուն լինել ժեստերում
  Ժեստերը ևս կարևոր դեր են խաղում մարդկային հարաբերություններում:
- Արթուն լինել գործելակերպում
  Արթուն լինել գործելակերպում, նշանակում է անել այն, ինչը մենք լսում ենք Աստծուց:

Օգոստոսի 31-ին Վանաձորում տեղի ունեցավ սպասավոր եղբայրների և ուսուցչական անձնակազմի ժողով: Ժողովը բաղկացած էր երկու մասից՝ հոգևոր և հարց ու պատասխանի:

Հոգևոր մասը պետք է ծառայի սպասավոր եղբայրների ու ուսուցչական անձնակազմի առաջադրանքների համար անհրաժեշտ ներքին աճին և զորությանը:

Ով որևէ մեկին պետք է ուսուցանի Ավետարանը և օգնի այն հասկանալ, պետք է ինքը օրինակ լինի:

Կորնթացիներին Ա-ի 16,13-ից վերցրված աստվածաշնչյան խոսքը ամենից առաջ վերաբերում է եկեղեցու ծառայողներին. ,,Արթուն կացեք, հաստատուն մնացեք հավատի մեջ, քաջ եղեք, զորացեք,,:

Մեր շրջանային առաքյալը նկարագրեց արթուն լինելու չորս մակարդակներ՝

Շրջանային առաքյալ Ռայներ Շթորքը համայնքների ծառայողներին հորդորեց հավատի մեջ մնալ, քաջ և ուժեղ լինել: Հավատի մեջ մնալը նշանակում է, որ սպասավորները և ուսուցչական անձնակազմը չպետք է միշտ միայն դժվարությունները, հոգսերը, վատը և խնդիրները տեսնեն: Տիրոջ օգնությամբ նրանք կկատարեն իրենց առաջադրանքը:

Համայնքներում և երեխաներին ծառայելը չի թուլացնում, այլ՝ ուժեղացնում է:

Ապա հետևեց հարց ու պատասխանը

Քննարկվեցին Նորառաքելական եկեղեցու խորհուրդները, մարդկային հարաբերությունները եկեղեցու ներսում և նրանից դուրս: Շրջանային առաքյալ Ռայնոր Շթորքը հիմնավոր պատասխանում էր բոլոր հարցերին, պարզ օրինակներով նա ամեն ինչ հասկանալի էր դարձնում: Այդ ինտերակտիվ քննարկումը մեծ դեր է խաղում հոգիների խնամքի գործում: Ներկաները գոհ էին, նրանք սրտանց շնորհակալություն հայտնեցին շրջանային առաքյալին և համաձառայող առաքյալներին բովանդակալից զրույցի համար:

Շրջանային առաքյալի հետ անցկացրած այդ երկու օրերը երկար կմնան սպասավոր եղբայրների և բոլոր քույր-եղբայրների հիշողություններում:

Սեմինար սպասավորական և ուսուցչական կազմի հետ Վանաձորում 31.08.2018

Սեմինար սպասավորական և ուսուցչական կազմի հետ Վանաձորում 31.08.2018

ՊՈՂՈՍԸ ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ՄԱԼԹԱՅԻ ՄՈՏ

/ԸՍՏ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅԻ 27- 28-Ի/

Պողոսը այլ կալանավորների հետ պետք է նավով Հռոմ տարվեր: Ուժեղ փոթորիկ է լինում: Երբ նավը խարիսխ է գցում Կրետեում, առաքյալը նավաստիներին զգուշացնում է նավարկելը շարունակելուց: Բայց հրամանատարը չի լսում Պողոսին:

Քամին վեր է ածվում հզոր փոթորկի: Նավի անձնակազմը իզուր փորձում է ամրացնել նավը: Հաջորդ օրը նրանք տախտակամածից նետում են բեռը: Փոթորիկը չի դադարում: Մեկ օր անց նետում են գործիքներն ու բոլոր հնարավոր առարկաները, այդպես նավը պետք է ավելի թեթևանար: Երկնքում ոչ արև է երևում, ոչ աստղ: Հզոր փոթորկի պատճառով ճանապարհորդները կորցրել են հույսը: Սակայն, Աստված հրեշտակի միջոցով Պողոսին ասել է տալիս, որ տախտակամածի վրա գտնվող 276 մարդիկ փրկվելու են: Անցնում է քառասուն օր ու գիշեր: Կեսգիշեր էր: Նավաստիները նետում են սուզակապարը և տեսնում, որ ջուրն այնքան էլ խորը չէ: Նրանք վախենում են խութի վրայով անցնելուց: Մի քանի նավաստի կից նավակներով փորձում են փախչել: Սակայն Պողոսը հորդորում է, որ եթե բոլորը միասին նավում չմնան, նրանք չեն փրկվի:
Օրը բացվելուց կարճ ժամանակ անց Պողոսը խորհուրդ է տալիս ճամապարհորդողներին ինչ-որ բան ուտել:
Նա վերցնում է հացը, շնորհակալություն հայտնում Աստծուն, կիսում այն և սկսում ինքն ուտել: Երբ լուսանում է, նավի անձնակազմը փորձում է նավը ցամաք հասցնել, սակայն խարիսխը ջարդվում է մի ծանծաղուտում: Մի քանիսը լողում են, մյուսները կառչում են ջախջախվող նավի գերաններից և փայտերից: Բոլոր 276 մարդիկ հասցնում են ողջ- առողջ ցամաք հասնել: Նրանք փրկվում են: Այն կղզին, որտեղ նրանք ափ են իջնում, կոչվում է Մալթա: Կղզու բնակիչները բարեկամաբար են ընդունում նավաբեկյալներին: Քանի որ անձրևում էր ու ցուրտ էր, նրանք կրակ են վառում նրանց համար: Պողոսն էլ էր ցախ հավաքում: Երբ նա փորձում

էր ցախի կապը կրակի մեջ գցել, հանկարծ տաքությունից սարսափած ցախի կապի միջից դուրս է գալիս մի օձ: Նա կծում է նրա ձեռքը: Իզու՞ր էր փոթորկից փրկվելը: Կղզու բնակիչները հարցնում էին միմյանց.,, Այս մարդը մարդասպան է՞: Սկզբում նա փրկվեց ծովից, բայց հետո նա ստիպված է մահանալ օձի խայթոցից: Ինչու՞ համար է այս վրեժը,,: Պողոսը օձին կրակի մեջ է նետում: Բնակիչները սպասում էին, որ ձեռքը կուռչի կամ Պողոսը մահացած կընկնի: Նրանք երկար են սպասում, բայց ոչինչ չի պատահում, կարծես Պողոսին օձը չէր էլ կծել: Պուբիլուսը՝ կղզու ամենահայտնի մարդը, հրավիրում է Պողոսին իր մոտ բնակվելու: Նրա հայրը հիվանդ էր և բարձր ջերմություն ուներ: Պողոսը գնում է նրա մոտ: Նա աղոթում է նրա հետ, ձեռքերը դնում է նրա գլխին և նրան առողջացնում: Հետո գալիս են կղզու մնացած հիվանդները և բժշկվում են Պողոսի կողմից:

Յուրը՝ Ամագիր՝ ,,Մենք՝ երեխաներս,,: հրատարակություն 07/18, ձևավորումը՝ Միրելլա Ֆորտունատոյի

ԱՅՑ ԴԱՄԻԱՆԻՆ՝ ԴՈՀԱՅՈՒՄ / ՔԱԹԱՐ/

Բարի գալուստ Քաթար: Իմ անունը Դամիան է և ես 13 տարեկան եմ: Ես ապրում եմ երկրի մայրաքաղաք Դոհայում իմ ծնողների և իմ եղբայր Դիլլոնի հետ / նա 15 տարեկան է/ : Քաթարը գտնվում է Առաջավոր Ասիայում՝ Սաուդյան Արաբիայից հյուսիս-արևելք գտնվող մի թերակղզու վրա:.

Այստեղ ենք մենք ապրում, սա մեր տան մուտքն է: Իմ ծնողները սերում են հարավային Աֆրիկայից և յոթ տարի առաջ տեղափոխվել են Քաթար, քանի որ իմ հայրը այստեղ լավ աշխատանք է գտել: Նա օդանավակայանում նախագծային մենեջմենթ- ֆիրմայի դիրեկտորի պաշտոնակատար է, իմ մայրը երաժշտություն է դասավանդում իմ դպրոցում: Քաթարում շատ արտասահմանցիներ են ապրում, միայն յուրաքանչյուր իններորդն է տեղաբնիկ: Արտասահմանցիների մեծ մասն այստեղ է եկել, որպեսզի աշխատի նավթա-գազային արդյունաբերության մեջ: Այս օգտակար հանածոները երկիրը հարստացրել են:.

Մի լուսանկար իմ ընկերների հետ, այն արվել է մի ծննդյան տոնակատարության ժամանակ, ռեստորանում:

Իմ հայրը մեր համայնքի առաջնորդն է: Բացի դրանից, նա երգում է երգչախմբում և նվագում է երգեհոն: Իմ մայրը երգչախմբի խմբավարն է և նույնպես երգեհոն ու հոբոյ է նվագում նվագախմբում: Ընտանիքում տարածված է երաժշտությամբ զբաղվելը. ինչպես տեսնում եք նկարում, ես նվագում եմ թավջութակ, իմ եղբայրը որոշում է կայացրել նվագել ստեղնաշարային գործիք:

Մեր ժամերգությունները տեղի են ունենում քրիստոնեական համայնքային կենտրոնում: Այնտեղ կա մի փոքր սենյակ, որտեղ մենք կարողացել ենք դնել աթոռներ և սեղան, ինչը որպես զոհասեղան է ծառայում: Պահարանում դնում ենք սեղանի ծածկոցը, ստեղնաշարը, երգարանները, նոտաները և նոտակալները: Ժամերգությունից առաջ մենք կահավորում ենք սենյակը:

Սա այն դպրոցն է, որը ես եմ հաճախում: Իմ սիրած առարկաներն են՝ աշխարհագրությունը, թատրոնը, սպորտը և պատմությունը:

Այն, ինչը որ ես չեմ սիրում՝ ռեգբի խաղալն է, լոլիկը, անգլերենի պարապմունքը: Ինչը ես սիրում եմ՝ խաղալն է խաղասրահում և իմ պլանշետով, պանրով մակարոնը, ֆուտբոլը և սպորտի այլ ձևեր:

2022 թվականին Քաթարում տեղի է ունենալու ֆուտբոլի աշխարհի առաջնությունը: Քանի որ մեզ մոտ ամռանը հաճախ 40 աստիճանից բարձր է լինում, առաջնությունը տեղի է ունենալու ձմռանը: Այդ ժամանակ ջերմաստիճանը միջինը կլինի 17-ից 20 աստիճան:.

Աղբյուրը՝ Ամագիր՝ ,,Մենք՝ երեխաներս,,; հրատարակություն 07/18; լուսանկարը՝ մանավոր, Fotolia.com: Իվան Գրիմիշով TOP67. Անդրեաս Վոլֆ Ֆաիրվասեր

Լուսանկարը՝ Բրիան Ջեկսոնի - Fotolia.com

Աղոթքը՝ անժխտելի կյանքի բոլոր իրավիճակներում

Ինչու՞ ենք մենք աղոթում: Ի՞նչ է անում, ընդհանրապես, աղոթքը աղոթելու ժամանակ: Եվ ի՞նչ է պահանջվում ակտիվ աղոթքային կյանքի համար: Աստծո հետ երկխոսելու մտքեր – գլխավոր առաքյալի գրչից:

Երբ խոսում են աղոթքից, ապա առաջին հերթին հավանաբար նկատի են ունենում ժամերգության ժամանակ հնչող աղոթքը: Նրանում երկրպագությունը, շնորհակալությունը, խնդրանքը և բարեխոսությունը էական բաղադրիչներ են: Աղոթքները, որոնք հնչում են ժամերգությունների ժամանակ, ոչ թե արտահայտությունն են շնորհակալության, խնդրանքի և ծառայողի մտահոգության, այլ դրանք արտահայտում են այն, ինչ վերաբերում և հուզում է ողջ համայնքին:.

Ժամերգության ժամանակ ընդհանրական աղոթքը վկայակոչում է ժամերգության մասնակիցներին, թե ինչ կարևոր է անհատական աղոթքը հավատքային կյանքի համար: Ժամերգության ժամանակ հնչող աղոթքը պետք է քաջալերի անհատական աղոթելը, և ոչ միայն դժվար իրավիճակներում, երբ ոչ մի ելք չեն տեսնում և շփոթված ենք, այլ՝ կյանքի բոլոր իրավիճակներում:

Հավատի և միասնության արտահայտում

Աղոթքը Աստծո և մարդու միջև միասնության էական արտահայտություն է: Այս առումով դավանաբանության մեջ գրված է. ,, Աղոթքում հավատացյալը տեղեկացնում է՝ Աստված ներկա է, Աստված լսում է, Աստված պատասխանում է,,/ ՆԱԵԴ 13,1/:

Շատերի մոտ, այնուամենայնիվ, անհատական աղոթքը, որն ավանդույթի համաձայն անվանում են աղոթքային կյանք, հաճախ ետին պլան է մղվում: Սակայն, անհրաժեշտ է միշտ մտածել աղոթելու հնարավորության մասին: Այս առումով, եթե երեխաների հավատքային կյանքի համար պատասխանատվություն ունեն, պետք է կանոնավոր աղոթեն նրանց հետ, որպեսզի նրանք իմանան, որ աղոթքը լսում են ոչ միայն ժամերգության ժամանակ, այլ նաև՝ առօրյայում:

Երբ մենք աղոթում ենք, դա նախ հանդիսանում է մեր հավատի արտահայտությունը, քանի որ առանց Աստծուն հավատալու՝ նրա հետ խոսելն ու նրանից պատասխան պահանջելը անիմաստ է: Սակայն, հավատացյալը գիտի՝ Աստծո հետ խոսելը հնարավոր է և նա պատասխանում է: Մարդն Աստծո ստեղծածն է, նրա պատկերը, և դրանից էլ նաև Աստծո զրուցակիցը:

Ով օգտագործում է աղոթքի հնարավորությունը, հասկանում է, որ Աստված իր դիմացն է, նա լսում է և պատասխանում: Այդ իմացությունը հանգեցնում է նրան, որ Աստված ճանաչելի է դառնում, որ նա հետաքրքրվում է մարդկանց պահանջով և նրան ուղեկցում է իր ճանապարհին: Այսպես, աղոթքը նաև ներքին պահվածքի արտահայտություն է, որը բնորոշվում է Աստծու հանդեպ վստահությամբ: Ով աղոթում է, նա պետք է նաև իմանա, թե ինչ բաղադրիչներ են աղոթքին պատկանում: Հաջորդիվ խոսքն այդ մասին է:

Ներքին և արտաքին պահվածք

Աղոթքին նախ պատկանում է մարմնական որոշակի կեցվածք, օրինակ, մատների ծալում, որպեսզի ազդարարեն, որ հիմա այդ պահին ոչ թե նա է, ով գործողն ու զբաղվածն է, այլ նա, ով ամբողջապես կենտրոնանում է Աստծո հետ երկխոսության համար և դադարեցնում է մնացած բոլոր գործողությունները: Աղոթողները, ովքեր աղոթելիս ծկի են գալիս, ցույց են տալիս, որ նրանք հնազանդ են Աստծո առաջ, պատվում են նրան որպես Ամենազորի, Վեհի և Գթասրտի, որի բարեխոսությանն էլ նրանք անվերապահ վստահում են: Երբ աղոթքի ժամանակ աչքերը փակում են, դա նպաստում է այն բանին, որ ոչ մի բան այդ երկխոսության ժամանակ նրանց չշեղի:

Արդեն արտաքին կեցվածքով պարզ է դառնում, որ աղոթողը հանդիսանում է այն մեկը, ով ամբողջովին առաջնորդվում է Աստծով: Աղոթքն առաջանում է Աստծուն դառնալու անմիջական պահանջից, որպեսզի նրան շնորհակալություն հայտնի ընդունածի համար, նրա աջակցությունն ու օգնությունը խնդրի: Այսինքն՝ աղոթքում մարդը միշտ ընդունող է, անգամ եթե նա, ինչպես Հիսուսը Ղուկասի 22;44-ում, Աստծո հետ է մարտնչում կամ հորդորելով նրա դեմ է գալիս: Այսինքն՝ մարդը խնդրողն է, իսկ Աստված տվողն ու երաշխավորողը: Ի վերջո, աղոթքում խոսքը գնում է ողորմածության և փրկության մասին, որի պահանջն ունի մարդը և Աստված նրան դրա մասնակիցն է դարձնում:

Աղոթքում դեմ դիմաց միայն Աստվածն է: Դա և միասնական աղոթքի, և ժամերգության ժամանակ հնչող աղոթքի ժամանակ է: Խոսում են ոչ թե ներկա գտնվողների հետ, այլ՝ Աստծո: Այնուամենայնիվ, աղոթքը ոչ մենախոսություն է, ոչ էլ՝ աղոթողների հետ զրույց:

Ով աղոթքի մեջ վստահում է Աստծուն, նա կապրի, որ Աստված սիրող և հոգացող Հայր է, ով կյանքի տարբեր իրավիճակներում ուժ և իր ուղեկցությունն

է նվիրում: Երբ մենք ճանաչում ենք Հայր Աստծուն որպես Արարչի, Հիսուս Քրիստոսին որպես Փրկչի և և Սուրբ Հոգուն որպես նոր Արարաչի, դա կարող ենք արդեն աղոթքի մեջ արտահայտել: Այսպես, մի կողմից մեր խոստովանությունը մեր կյանքի մի մասն է, մյուս կողմից՝ երկրպագությունը, շնորհակալությունը, խնդրանքը, բարեխոսությունը, որոնք պատկանում են աղոթքին, ներառում են Աստծո էությունը : Այստեղից էլ, աղոթքը անմիջական աստվածաճանաչողության կարևոր աղբյուր է:

Անդրադառնանք արդեն նշված ասպեկտներին, որոնք հավասարապես պատկանում են ընդհանրական և անհատական աղոթքներին:

Երկրպագություն

Նախ աղոթքը երկրպագություն է – աստվածայինը, որը ճանաչվում է որպես ամենազոր, վեհ, խորհրդավոր և վսեմ, թույլ է տալիս մարդուն դրանով միաժամանակ հիանալ և սարսռալ: Երկրպագությունը լինում է խնդրանքից և բարեխոսությունից առաջ: Երկրպագությունն ամենից առաջ ուղղված է Աստծուն, քանի որ նա ամեն ինչից վեր է, քանի որ նրանով վերացված են բոլոր սահմանափակումները: Երկրպագությամբ ակնածանքով մոտենում են Աստծո մեծությանը, որն արտահայտվում է նաև սրբություն, ամենազորություն, հավերժություն հասկացություններով:

Եվ Հին և Նոր կտակարաններում երկրպագության բազմապիսի օրինակներ կան.,, Եկեք երկրպագենք նրան, խոնարհվենք ու լաց լինենք մեր Արարչի՝ Տիրոջ առջև,,/ Սաղմոս 95,5/: Հայտնության 4; 10;11-ում ժեստերի և բառի օգտագործումը համարվում է որպես ճիշտ երկրպագության .,, Քսանչորս երեցներն ընկնում էին աթոռի վրա նստածի առաջ և երկրպագում հավիտյանս հավիտենից կենդանի եղողին և իրենց պսակները դնում էին աթոռի առաջ ու ասում.,, մեր սուրբ Տեր Աստված, արժանի ես ընդունելու փառք ու պատիվ և զորություն, որովհետև դու ստեղծեցիր բոլորը և քո կամենալով ստեղծվեցին ու գոյություն ունեն,,:

Հին կտակարանում երկրպագության միակ լեգիտիմ օբյեկտը Իսրայելի Աստվածն է, որը միաժամանակ տիեզերքի Արարիչն է: Նոր կտակարանը հիմնավորում է, որ Հայր Աստծո նման Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին ևս երկրպագության արժանի են: Հարություն առած և բարձրացած Տերն է, ով պետք է երկրպագվի: Սուրբ Հոգին պետք է երկրպագվի որպես Աստծո ներկայություն և նոր Արարիչ: Վերջին նպատակն այն է, որ բոլոր մարդիկ ու ժողովուրդները, ինչպես նաև տեսանելի ու անտեսանելի ուժերը աշխարհի միակ Աստծուն երկրպագեն / Եսայի 45;14; Զաքարիա 14;9,16; Սաղմոս 96; 7-9, Հովհաննես 4; 20-24/: Հարություն առած Հիսուս Քրիստոսը միաժամանակ բարձրագույն Տերն է, ով պետք է երկրպագվի և երկրպագվում է: Ինչ Հին կտակարանում Աստծո մասին ասված է, պետք է վերաբերի նաև Հիսուս Քրիստոսին / Փիլիպպացիներ 2; 9-11/: Համբարձման ժամանակ պարզ դարձավ , որ Հիսուս Քրիստոսը երկրպագության մաս է դառնում. ,, Իսկ նրանք երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ,,/Ղուկաս 24,52/:

Շնորհակալություն

Շնորհակալությունը գալիս է այն իմացությունից, որ մարդկային կյանքը կախված է Աստծո հետ հարաբերությունից: Ով շնորհակալություն է հայտնում, շնորհակալ է լինում նախ իր համար, իր գոյության համար, անկախ նրանից, մարդկային տեսանկյունով այն հաջող է, թե՝ ոչ: Այդ շնորհակալությամբ արտահայտվում է, որ Աստված Արարիչ է և պահապանը իր արարչագործության, և մենք կազմում ենք այդ արարչագործության մի մասը:

Արժևորումը, ուղեկցումը և ողորմածաբար վերաբերմունքը առիթ են դառնում մարդու համար շնորհակալություն հայտնելու: Շնորհակալությունը հայտնում են այն գիտակցությունից, որ կյանքն ու կյանքի իրավիճակները ոչ թե պատահականությունների արդյունք են, այլ որոշվում են Աստծո կողմից երաշխավորությամբ և արգելանքով:

Խնդրանք

Երբեմն թվում է, թե աղոթքը ամենից առաջ խնդրանք է, նաև Հայր մեր աղոթքում՝ Հիսուսի աղոթքում, խնդրանքներ շատ կան: Աստծուն խնդրանքով դիմելը պարզ է դարձնում, որ Աստված նա է, ում կարելի է դիմել կյանքի բոլոր իրավիճակներում: Խնդրողը աղոթքին կցում է իր սեփական կյանքի իրավիճակը:

Ով Աստծուն խնդրում է ինչ-որ բանի համար, նա նրան ճանաչում է որպես օգնողի և իր կյանքի երաշխավորի: Աղոթքում մարդը հայտնում է, որ Աստված գթասիրտ է և դառնում է դեպի մարդը: Նա խոստովանում է նրան որպես մեկի, ով

Լուսանկարը՝ Աֆրիկա ստուդիայի - Fotolia.com

իրականացնում է խնդրանքները և պաշտպանում: Խնդրանքի աղոթքի հիմքում ընկած է այն, որ Աստված դառնում է իր ստեղծածին և սիրում է նրան: Աստված հեռու չէ և անտարբեր չէ իր կողմից արարվածի հանդեպ, այլ ուղեկցում է նրան և պաշտպանում: Նա ցանկանում է նրա փրկությունը և մատչելի դարձնում հավիտենական կյանքը:

Բարեխոսություն

Բարեխոսությունը բխում է այն իմացությունից, որ հավատացյալը իր հավատը իրականացնում է ոչ թե միայնակ, այլ մյուս հավատացյալների միասնության մեջ: Բացի դրանից, աղոթողը ճանաչում է իրեն որպես Աստծո պատկերով ստեղծված, ինչպես և մյուսներին, քանի որ նրանք էլ են Աստծո պատկերով և նրանց հետ կապի մեջ է գտնվում և նրաց հետ գտնվում է Աստծո արարչագործության միասնության մեջ: Բացի այդ, բարեխոսությունը մերձավորին սիրելու պատվիրանի հետևանքն է: Այն խնդրանքը, որ Աստված պահպանի նաև մյուսներին, պաշտպանի և փրկությունը նրանց համար հնարավոր դարձնի, հավատացյալին պաշտպանում են փրկությունը միայն իր համար ցանկանալու վտանգից:.

Եզրակացություն

Ամեն ինչ, ինչը հուզում է մարդուն և շարժում նրա սրտում՝ սեփական կարիքներն ու ցանկությունները և ուրիշների կարիքներն ու ցանկությունները, մաս են կազմում աղոթքի: Աղոթքին են պատկանում նմանապես վախերը և ուրախությունը, առողջն ու հիվանդը, մահացող կյանքը, բնության գեղեցկությունը և մարդու գոյությունը միասնության մեջ, միմյանց համար ներկա գտնվելը, նաև անդնդայինը, ավերումը, որը մարդը կատարում է բնության և այլ մարդկանց հանդեպ: Ուրեմն՝ աղոթքն անժխտելի է կյանքի համար, որը որոշվում է հավատով և հետևորդ լինելով:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Überlandstrasse 243, 8051 Zürich/Switzerland
Ֆրիդրիխ Բիշոֆֆ հրատարակչություն ՓԲԸ, Frankfurter Str. 233, 63263 Neu-Isenburg/Germany
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Նախատեսում

06.10.2018	Սետուբալ(Պորտուգալիա)
07.10.2018	Սասսոեիրոս (Պորտուգալիա)
12.10.2018	Բրազիլիա(Բրազիլիա)
13.10.2018	Կուրիթիբիա (Բրազիլիա)
21.10.2018	Վարշավա(Լեհաստան)
04.11.2018	Զինդելֆինգեն(Գերմանիա)
11.11.2018	Ուսթեր(Շվեյցարիա)
22.11.2018	Պալանգկա Ռայա (Ինդոնեզիա)
25.11.2018	Բանդունգ(Ինդոնեզիա)
09.12.2018	Պրետորիա (Հարավային Աֆրիկա)
16.12.2018	Բեռլին(Գերմանիա)
23.12.2018	Վայմար (Գերմանիա)
25.12.2018	Ֆրանսիա

New Apostolic Church
International